ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ՔՆՆՈՂ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ 2024 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

1.Բուժաշխատողի մասնագիտական էթիկայի կանոնների խախտման դեպքերով հարուցված վարույթների մասին տեղեկատվություն.

1)Հարուցված վարույթների ընդհանուր թիվը՝ 10, որից՝ փաստաթղթերը թերի լինելու հիմքով կարճված վարույթների թիվը՝ 2, համապատասխան որոշումների ընդունմամբ ավարտված վարույթների թիվը՝ 7, ընթացքում գտնվող վարույթների թիվը՝ 1.

2)Վարույթներից 2-ը հարուցվել են պացիենտների, 3-ը՝ մահացած պացիենտների ընտանիքների անդամների, 1-ը՝ բուժաշխատողների համատեղ ներկայացված դիմումների հիման վրա, 2-ը՝ Հանձնաժողովի նախաձեռնությամբ.

3)Բուժաշխատողի մասնագիտական էթիկայի կանոնների խախտման հաստատված դեպքերով վարույթների թիվը՝ 4 (խախտում կատարած բուժաշխատողների թիվը 5[1]).

4)Բուժաշխատողի մասնագիտական էթիկայի կանոնների խախտման չհաստատված դեպքերով վարույթների թիվը՝ 3 (խախտումներ փաստերը չեն հաստատվել 5 բուժաշխատողի մասով[2]).

5)ՀՀ կառավարության 2022 թվականի փետրվարի 17-ի թիվ 182-Ն որոշմամբ սահմանված էթիկայի կանոնների խախտման դեպքերը՝ որոշման հավելվածի 2-րդ կետի 1-ին, 4-րդ ենթակետեր, 3-րդ կետի 1-ին, 2-րդ, 4-րդ, 6-րդ ենթակետեր, 4-րդ կետի 2-րդ ենթակետ.

6)Հանձնաժողովի որոշումների հիման վրա բժշկական կազմակերպության գործադիր մարմնի կողմից բուժաշխատողի նկատմամբ կարգապահական պատասխանատվություն կիրառելու դեպքերը՝ 2 («Գրիգոր Նարեկացի բժշկական կենտրոն» ՓԲԸ, «Աշտարակի բժշկական կենտրոն» ՓԲԸ).

7)Հանձնաժողովի որոշումների հիման վրա բժշկական կազմակերպության գործադիր մարմնի կողմից բուժաշխատողի նկատմամբ կարգապահական պատասխանատվություն չկիրառելու դեպքերը՝ 2 («Նաիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ, «Արմենիա հանրապետական բժշկական կենտրոն» ՓԲԸ):

Հանձնաժողովը ստացել է նաև 20-ից ավելի հարցումներ (փոստային ծառայության և էլեկտրոնային փոստի միջոցով), որոնց սահմանված կարգով պատասխաններ են ուղարկվել, ներկայացվել պարզաբանումներ:

---

[1] Առանձին դիմումներ պարունակել են տվյալներ մեկից ավելի բուժաշխատողների վերաբերյալ

[2] Առանձին դիմումներ պարունակել են տվյալներ մեկից ավելի բուժաշխատողների վերաբերյալ